



նարանի վերա, որովհետեւ ազայց ուսումնա-  
րանը արգելն ինն արթի գոյութիւն ունենալով,  
հարկաւ պէտք էր շատ թէ քիչ աւելի կազմա-  
կերպուած լինէր մինչդեռ օրիորդաց ուսումնա-  
րանը այս երկրորդ արթին է որ բացուել է:  
Չը նայելով այս կարծ ժամանակամիջոցին՝ այդ  
ուսումնարանը այնպիսի յառաջադիմութիւն  
ցոյց տուեց, որից աւելի սպասել չէր կարելի:  
Յարգելի կառավարչունին, տիկին Ա. Տէր-Ղ. Խոն-  
դեանը, ինչպէս երեսում է, ոչինչ ջանք և աշ-  
խատութիւն չէր խնայել, թէ աշակերտունիների  
բնաւորութիւնը աղնացնելու և թէ նոցա մը-  
տաւորապէս զարգացնելու: Օրիորդների պա-  
տասխաններից, մանաւանդ աւագ նախակիթա-  
րանում (Երկրորդ արթի), ոչ թէ երեսում էր, որ  
նոքա գիտեն առարկան, այլ որ իշխում են  
իրանց իմացածի վերա: Թող մեր ասածը ոչ ոք  
այլապէս չը բացատրէ, որովհետեւ մենք մեր  
խօսքին վկայ ունենք բազմաթիւ հանդիսական-  
ներ, թէ ազամարդուկ և թէ կանայք, որոնք  
ներկայ են եղել բոլոր քննութիւններին և յայտ-  
նել են իրանց բաւականութիւնը: Յարգելի տիկ-  
նօջ առարկաներն են, բայց ձեւագործից, ուու-  
սական լեզու և թուաբանութիւն: Մեծ յառա-  
ջարինութիւնն էին արել օրիորդները և հայերէն  
լեզուից, բայց այս մատին տևելուդ է ընդար-  
ձակ խօսել: Ես այս երկու-երեք խօսքով ան-  
գամ գուցէ կը վիրաւորէի ու, և պ. Տէր-Ղ. Խոն-  
դեանների համեստութիւնը, եթէ մի ցաւալի  
հանգամանք չը դրէք այդ անելու, և այդ հան-  
գամանքն է յիշեալ անձների մեր ուսումնարան-  
ներից հեռանալը: Պ. Տէր-Ղ. Խոնդեանը՝ իւր կը-  
նօջ հիւանդութեան պատճառով, ստիպուեցաւ  
թողնել Յօզզօկը. իսկ սորանով, ցաւելով ասում  
ենք, մեր ուսումնարանները զրիւեցան երկու  
բարեխիզճ և զարծնւեայ անձներից: Ես, իրեն  
ուսումնարանների աեսուչ և հոգաբարձութեան  
անդամ, պարտք եմ համարում յայտնել նոցա  
իրանց անձնանուեկ ծառայութեան համար մեր  
հրազդակական չորհակալութիւնը: Մի և նոյն  
ժամանակ սորանով զիմում են մեր հայ երի-  
տասարդներին և երիտասարդունիներին, յայտ-  
նելով, որ յիշեալ անձների հեռանալով ու-  
սումնարաններում ուսուցչի և վարաժուհու հար-  
կաւորութիւն կայ, ուստի թող ցանկացովները  
բարեհաճնեն յայտնել իրանց կամքը օրով առաջ:  
Պայմանների մասին կարող են տեղեկանալ հայ  
լրացիների խմբագրաններում կամ ուղղակի  
զիմուլ ուսումնարանների հոգաբարձութեանը:

## ԱՅՐԵՒՆ ԼԱՐԵՐ

կանալի է որ առաջնոր քջապատված վնակով  
առարկաների աւելի փոքր թւով, միջոց չի ու-  
նենայ բնդունել զարգագույների այնքան մեծ  
պաշար, որքան այն երիխան, որ հարուստ տան  
մէջ է մնանում, և որ իր մասադ հասակից կա-  
րողանում է ստանալ աւելի շատ, աւելի բազ-

մակոդասար ապաւորաթբեռնում ։ Այս կազմում էր և  
առաջնային ազգային հայությունը ։ Ամեն մի հայ աշխարհ  
գալով կամայ ակամայ ընդունում է իրան ար-  
ջապատող ազգային երեսոյթների, զգացմունք  
ների ապաւորաթիւնները, սեփականուցնում է  
իրան իր պատմական յիշատակները։

Մասիս, Հայուսամն, հայրենիք, եկեղեցի, կը  
բռն, քրիստոնէութեան համար իրանց արիւնի  
թափած սուրբ հերոսներ,—ահա հայի զիվաւոր  
ոպատմական յիշաւակները:

Եւ ճշմարիտ եթէ մենք հետեւնք մեր լրա  
պրութեան զարգացմանը, եթէ հետազօտենք  
նրա ծագումը և զարգացումը.—Իը համովլենք  
որ բայցի լոջապատող բնական առարկաներից  
որոնք միշտ նախ և առաջ ազդում են անզար  
զացած հասարակութեան վրա, հայոց լրագրու-  
թեան զարգացման վրա մեծ ազդեցութիւն ու-  
նեցան և մեր ազգի պատմական յիշատակները  
Մենք ունեինք արդէն բարոյական զարգափար  
ներ, բայց այդ բարոյական զարգափարները  
իրանց սկիզբը առնում էին մեր հնութեան մէջ  
մեր հարուստ, թէն միակուզմանի անցնեալի մէջ  
չային պակաս էին, և պակաս են մինչեւ այժմ  
Էւ լուսաւորված աշխարհից մշակված ժամանա-  
կակից զարգափարները:

շարունակվում է Առշատում և Նրանից ամեն օր  
մեռնում են 5—10 մարդ: Նոյն լրակրին զբում  
են որ այս վարի շերտամի թերքը Պարսկաստա-  
նում միջակ է, բայց զները շատ ցած են, որով-  
հետեւ չը կան առնողներ:

Ահա ապամ ենք անձանց աղդանուների ցու-  
յակը, որոնք փողեր նուիրեցին գեներալ Տէր-  
Պառ կառավարի առաջնորդութեամբ Թուրքիա-  
յից Առաստանի սահմանները դադթաճ 3000  
հայ ընտանիքների օգախն Հաւաքված փողերը  
հասցրած կը լինեն գեներալ Տէր-Պառկասովին  
հաւատարիմ անձի ձեռքով իրանց նշանակու-  
թեանը համեմատ բաժանված լինելու համար:  
Տիկին Վարդուհի Դաւթեան Անանեանց 100 ր.,  
տիկին Եփէմիա Զիթախեանց 25 ր., տիկին  
Սովիթա Խղմիրեանց 10 ր., զօկտօր Քուչարեանց  
50 ր., Յովհաննէս Ստէփանեան Խատիսօվ 50 ր.,  
Ալեքսանդր Յովհաննիսեան Միթրոյեանց 300  
ր., Յովհաննէս Ալեքսեան Զիթախեանց 300 ր.,  
Յովհաննէս Մինէեան Միթրոյեանց 500 ր., Գրի-  
գոր Սարգսեան Շիոյեան 50 ր., Արքահամ Բա-  
րանով 20 ր., Էշուան Կապոէլօն Ամառանի 25  
ր., Լուարսաք Մէլիք-Բէզզեարօվ 25 ր., Ան-  
յայտ 50 ր., Ստէփան Խղմիրեան 50 ր., Գէորգ  
Պապիսեան 30 ր., Արտէմ Խղմիրեանց 50 ր.,  
Ա. Շաղինեանց 20 ր., Կարգանօվ և Եղոր Խա-  
չկով 20 ր., Էլմարիօն Փօրտքօվ 10 ր. Աղեք-  
սանդր Ալավերդօվ 10 ր., Աղալո Գօնիկի 10 ր.,  
Եղոր Նոռոօվ 10 ր., Վասիլ Վալայքարօվ  
20 ր., Սօզօմոն Շարուրօվ 25 ր., Ժօղէֆ Բիշար  
25 ր., Խան Եմինով 50 ր., Ի. Ճ. 25 ր., Ա-  
րիչինով 10 ր., Եղոր Ծոտինօվ 50 ր., Ան-  
յայտ 100 ր., Գ. Աղաբէգօվ 50 ր., Օ. Մէ-  
կումօվ 25 ր., Վասիլ Սուրբունօվ 10 ր., Ա.  
Յուրինօվ 10 ր., Խ. Գաւիդօվ 10 ր., զօկտօր  
Խ. Գասպարեանց 3 ր., Ն. 25 ր. Եագօր Զափ-  
դէշտօվ 20 ր., Զաքար Սարաջօվ 3 ր., Մ. Տէր-  
Միրաչեանց 10 ր., «Փորձի» Խմբագրութիւն 25  
ր., Ա. Մէլիք-Աղաբեանց 50 ր. Աղեքս. Այժմ-  
գով 10 ր., Գուրգինբեկօվ 10 ր., Եագօր Խա-  
սումօվ 10 ր., Յովհաննէս Մարգարեան 50 ր.,  
Արտէմ Սահասսազօվ 20 ր., Թոմա Շաղինօվ  
10 ր., Նաղօրնի Սավեանիկ 10 ր., Արտէմ  
Մակարօվ 10 ր., Մահմադ Ալիբէկօվ 10 ր.,  
Լուկինիցի 10 ր., Մէլիք-Բէրինօվ 10 ր., Խան  
Ամիրագօվ 5 ր., Շաքար Եարալեանց 8 ր., Սօ-  
լոմոն Բայսօղով 25 ր., Նիկոտա Օսկանեանց  
5 ր., Մէլիքսէդ Տէր-Մէլիքսէդեան 10 ր., Ար-

տաղեանց 10 ր., Աէլք-Գանջումեանց 10 ր.,  
N. N. 5 ր., Արտէմ Թամամչեանց 15 ր., Խվան  
Տէր-Աստուրօվ 25 ր., Պօլտարացկի 25 ր., Գրի-  
գոր Սեղմինօվ 10 ր., Մ. Թամամչեկի 25 ր., Համբս  
կապիտան Արտեմ Կարգանօվ 50 ր., Արտեմ  
Խարազօվ 15 ր., N. N. 5 ր., Զարտիչեանց  
10 ր., Ն. Շաղինօվ 5 ր., N. N. 25 ր., Խ-  
խան Բարատօվ 5 ր., Ազէքսանդր Անանօվ  
500 ր., Գրիգոր Անանօվ 50 ր., Գ. Խասամա-  
նեանց 5 ր., Խորին Արբազնութիւն Գալրիէլ

Մենք ասացինք որ մի լրազրի վերնագիր  
պէտք է լինի և լինում է միշտ նոյն լրազրի  
ուղղութեան և բովանդակութեան արտայայտիչ  
նրա դեմքը, նրա դրօշակը . . . .

Երբ հայր հիմնեց իր սեփական մամուլ նա  
որիշ աւելի ժամանակակից գողակարներ չու-  
նենալով, տուեց իր հրատարակութիւններին իր  
անցեալից, հին կեանքից, պատմական յիշատա-  
կից վերցրած վերնագիրներ, որոնք այսուիսով  
անգիտակցարար դարձան նրա հոգևոր, մասաւոր  
և բարոյական նեղ ազգային կեանք արտայայ-  
տիչներ . . . .

Մամուլը կրեց հետեւեալ անոններ՝ Արշալոյս  
Արարատեան, Հայրենիք, Արարատ, Մասիս,  
Սիօն, Ցիւն Աւարայրի, Հայկական Աշխարհ,  
Մասեաց Ազաւի և այլն և այլն . . .

Բայց հետո որ հայը ուղեցաւ մօտենալ ժամ-  
մանակակից կեանքին և արտայայտել նրա գա-  
ղափարները, նա սկսեց իր մամուլին այնպիսի  
անուններ ատալ, որոնք գուրկի լինելով բարձր,  
հասարակական բարոյական գաղափարներից,  
ցայց էին տալիս միայն կամ տեղի անունը որ-  
տեղ հրատարակում էին, կամ հրատարակու-  
թեան բավանդակութիւնը և ոչ ուղղութիւնը:  
Առաջիններին պատկանում են օրինակ Համ-  
բաւարեր Առուխոյ, Եւրօոլա և Հիւսիսափայլ  
(առաջին անգամ ակնարկութիւն լոյսի, լուսա-  
ւարութեան վրա), երկրաբոներին՝ Բազմավեպ,  
և այլն:  
Առաջին փորձերը վերացական գաղափարի

ყრივალე კამპანიაზე, ზოგინთქმის მარალი ხდას;  
ჯაველ თებერ არავავავთხელ აკსამანტები, თაქმა-

Հպագեան 6 ր., Պ. Տոլլէ 10 ր., Ֆերգինանդ  
ոլլէ 10 ր., Ե. Միրզոեվ 10 ր., Ե. Տէր-Ատե-  
մանօվ 5 ր., Իսակիթ Սարգսեան 20 ր., Ար-  
էմ Փարեմուղեան 10 ր., Միքայէլ Վարդա-  
ռօվ 10 ր., Գ. Շաղինեան 10 ր., Եզօր Գե-  
ուրով 10 ր., Ա. Ծովիանեանց 100 ր., Կա-  
պիկ Մուտաֆեանց 30 ր., Նիկոլայ Եսրա-  
ռօվ 15 ր., Ազէքսանդր Ելենանց 3 ր., Եազօր  
բուտինօվ 10 ր., Գ. Գարագօղեանց 5 ր.,  
Լիկոյասս Փրիդօնեանց և Էջուր Էջուրեանց  
100 ր., Խոսկի Ալելով 200 ր., Պ. Զաքարեանց  
5 ր., Մալուշն Թաւաղեանց 10 ր., Գևորգ  
ջուրեանց 5 ր., Անտոն Գորգանեանց 400 ր.,  
և Արեանց 3 ր., Ա. Կալմանթարօվ 3 ր., Ա. 2 ր.,  
Արփուղարեանց 2 ր., Քամոյեանց 1 ր., Կա-  
նթառօվ 1 ր., Ղաղարեանց 3 ր., (այս եօթ  
հնձինք ծառայում են Թիվլիսի առևտրական-  
անկաւմ) Շաբուղագօվ 5 ր., Խակուրօվ 25 ր.,  
Ալէքս. Փրիդօնօվ 100 ր., Եղարք Յագոր և Խա-  
սակ Ցօվեմովմեր 100 ր., Տիգրան Ցօվեանօվ  
10 ր., Միքայէլ Պ., Բէրուտօվ 10 ր., Գրիգոր  
Արծրունի 20 ր., Ալէքսանդր Լազրիչ Թայր-  
օվ 100 ր., Ի. Փորակօվ 100 ր., Մարիամ Զի-  
ժաբինեանց 25 ր., Աննա Զիթախեանց 25 ր.,  
Ովկին Շախաղիգօվ 25 ր., Խիան Յուրինօվ 25 ր.,  
Եազօր Զորաբօվ 5 ր.: — Ընդամենը 4883 բուրլ:  
Խորապրամիներ շարունակում է:

—

Յուլիսի 10-ին, կիրակի օրը Թիֆլիսի թա-  
տուում առաջին անգամ ներկայացվեցաւ պ. Ա.  
Ֆ. Պալմի «Տաքրիմ Բարին» դրամա: Խնդիր ձե-  
մինակը մասնակցում էր ներկայացմանը, գլխա-  
կոր գերբ ինքն յանձն առնելով: Նա խորհման-  
քով կատարեց իր գերբը: Ներկայացումն էլ այ-  
նագամ սպասականից լաւ անցաւ, սրանք հետեւ  
երեսում է որ զերասանները աւելի հիմնաւոր  
կերպով զիտէին իրանց գերերը, քանի թէ զի-  
տէին առ հասարակ:

—

Կիրակի առաւօս յուլիսի 10-ին կրակ յայ-  
տնիցաւ Թիֆլիսի կենտրոնում գտնվող և  
կուր գեաթի ճիւղաւորութիւններից զոյցած  
կղզու վրա: Այսպում էր մի փայտեայ մեծ շի-  
նութիւն որ պարունակում էր իր մէջ մեծ քա-  
նակիութեամբ տախտակները: Դա, կարծեմ, տախ-  
տակներ սղոցելու հիմնարկութիւնն էր: Ամբողջ  
փայտեայ շինութիւնը իր մէջ պարունակու-  
աւախտակների սլաշարով, այրվեցաւ, բայց բազ-  
դաւորամոլէս բոցը չանցաւ հարեան շինութեանը,  
Միքայէլի խանոս թնկրի շարքին, որ անցեաւ  
տարի էլ այրվեցաւ: Աթէ քամին փոքր ինչ տ-  
ւելի սասարկ լինէր, բոցը կարող էր անցնել  
զետի զիմացի ավը, զէտի այն կողմ, ուր զար-  
գում է Լոնգօն հիւրանցը:

Տեղական ռուս լրագիրները ստացոն Ա. Պետրովի բարդիք հետեւեալ հետագիրը ռուսաց փողերի կուրսի մասին, յուլիսի 9-ից երեք ամիս ժամանակում: Ռուսաց բուրգ Լ. օնդօնի վրա փոխանակված, արժէ 24<sup>49</sup> պէնս Փարիզի վրա 251 ռանտիմ, 5<sup>0</sup><sub>0</sub> առաջին ներքին փոխառու-

տութեան գաղափարը որ յաւիտենական, անմահ, քաղաքանակական գաղափար է, որ միշտ եղել է, կայ և կը վնի, միայն կը փոփի իր ուզգութիւնը, կը զարգանայ, առաջադիմութիւն կանէ, — և այդ բարձր գաղափարը արտայայտելու համար ուրիշ անունն չը գտառ հայր, բայց Վեպու խօսից:

Այս միթէ այդ խօսքը ձևարիտ արտայաց-  
տում է ժամանակակից աշխատանքի գտնա-  
փարը, միթէ նա մինչև անգամ արտայացնում է  
առհասարակ մարդկային աշխատանքի գտ-  
գափարը:

Նայական աշխատանք և ոչ լու գրառացակազմութեան մարդկային աշխատաթիւնը. Մեղունիբը և մրր-  
ջիւնները միշտ աշխատում են և միշտ կաշխա-  
տեն այնպէս, ինչպէս աշխատած են աշխարհի  
սակեդման օրից. Խնչ ուզում էք կատարելա-

զործված փեթակներ շինէք, —մեղուները դարձեալ կաշխատեն այնպէս, ինչպէս զարերից առաջ են աշխատել, առանց բնդունակի մինելու կատարելադործութեան, զիտակցութեան, առաջադիմութեան: Երանց աշխատանքը անշարժ է, նրանց աշխատանքը չէ կարող համեմատվել աշխատանքի քաղաքատնական գաղափարի հետ: Աշխարժութիւն մէկի մէջ, շարժում, անընդհատ առաջակիմութիւնը միւսի մէջ, —ահա ինչ է զանազանում անաւանական, մերքենայական աշխատանքը՝ մարդկային, զիտակցական, առաջադիմը, քաղաքատնական աշխատանքից:

Աերջապէս հարկաւոր էր սաեղծել մի լրագիր, մի օրգան, որ հիմնվէր մարդկային, զիտակցա-

ան տուսակը արժէ 208 ր. 50 կ., երկուր-  
208 ր. 75 կ., միեսական բանկի 50<sub>0</sub> տոմ-  
կը առաջին շրջանի արժէ 99 ր. 75 կ., եր-  
րդ շրջանի 92 ր. 50 կ., 51<sub>2</sub><sub>0</sub> րէնտա 99  
75 կ., պօլուիմպէրիալը արժէ 8 ր. 80 կօպ.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

፩፻፲፭፻፭፻

Աերմանական «Կոհուսի Զետին» լրա-  
որ Հեռագիր է առացել և. Պօլսից, յուլիսի  
եց որի մէջ ասված է թէ Բ. Դուռը շատ  
հաւատում Մերբիայի խաղաղական խոս-  
ւներին, որոնք ներկայացրած են եզել  
ան Մերբիայի նուիրակ Խրիստիչք միջնոր-  
դիմեամբ։ Աբգուլ Համբուղի աշրութիւննը եր-  
ւղ է կրում որ Մերբիան չը մասնակցէ  
ասերապմին և որ նոյնպէս բումինացները  
նցնեն Դուռայ գետը։ Միւս կողմից Թիւր-  
ան մ.ձ վասահութիւն չունի. և Աւո-  
խայի արամագրութեան վրա։ Ահա այս  
ասձառապվ Յամնեան աշրութիւննը նորից  
մեց Աւստրիայի առաջին մինիստր Անդրա-  
հն Հարցնելով նրանից այս բոլոր կետերի  
ցատրութիւնը։ Աւստրիայի առաջին մի-  
տրը պատասխանեց թիւրքաց աշրու-  
եանը որ Աւստրօ-Աւնգարիա երբէք չի թոյլ  
այ Մերբիայի և Բումինիայի մէջ պատե-  
սկմանկան դաշն կապելու և պահանջած  
ամնանակ Աւստրիան կը պաշարի իր զօրքե-  
պ սերբիական և բումինական երկիրները—  
ուազիրը հաղորդում է որ Սուլեյման, փա-  
յի զօրքը յետ կանչվեցաւ Զերնօգօրիայից  
ասրիայի խորհրդավ։ Երեսում է որ Թիւր-  
իան դիաւորութիւն ունի թոյլ տալ աւս-  
տրիական զօրքին պաշարել Բօմիա նահանգը  
իւրքաց զօրքերի հետ միասին։ — Վիէննա-

Հետազոտման «Kölische Zeitung» պարբին որ կթէ բռնմինական գօրքը կանցնի ունայ գեար և կը մասնակցէ ուստաների հետ իւրքիայի դէմ պատերազմի մէջ, Աւատրիան յնու ամենայնիւ ոչինչ միջոցներ չեւ կործ ուի Բումիիիայի դէմ, թէև նա յայտնել է բարձր որ նա չի թոյլ տայ Բումինիային մեացնել իր երկիրը նոր նուաճութիւնով Դու - այի աջ ափի վրա: Աւատրիական տէրու - թիւնը հաւատացած է, որ Բումինիա և երբիս երբէք պատերազմական գաշն մի- եանց մէջ կապելու չեն, որովհեաւ Աեր- իային յայտնի պէտք է լինի Աւատրիայի

ան, առաջմտիմաթեանը ընդունակ, և ոչ թէ, հնչարժ, մեքենայական, անտանական աշխատանքի գոգափարի գրա, չիմնիեցաւ մի լրա-

իր որ անսուանվեցաւ Մշտկ։  
Մշտկ կապող է միայն մարդկացին և ակ լինել։  
Երբեք մի անհասուն մշտկ չի լինի։ Հշմարիտ  
մշտկն էլ կարող է անվարդացած լինել, կա-  
զմակը առաջ է գալիք և առաջ է գալիք կա-

ող է նահապետական կորպուլ աշրամակ, իր  
շրատանքի մէջ նահապետական դորձիքներ  
ործ զնել, —բայց որպէս մշակ, որպէս մարդ-  
ային էակ ունի չնորհ զարգանալու, ունի իր  
չէ կատարելագործաթեան սերմեր . . . . Այն  
որկապարծ մշակը որ այսօր նահապետական  
սրբութ իր հոգը վարում է, վազը կարող է կատա-  
րելագործաթ արօրով նոյնը աւելի լաւ, աւելի  
առարկեալ կերպով անել: Այն արուեստաւոր  
չշակը որ այսօր իր վորթիկ խոցի մէջ ծալա-  
կատակ նստած, նահապետական ձեռագործ է

սրգիւնաբերում, վազր կրթված մշակ դառնալով,  
յառաջնորդէ մի կատարելուրդքած մեքենայ,  
ըլ ստեղծէ ժամանակին յարմար արդիւնքներ....  
Ապագան պատկանում է աշխատանքին, գի-  
ուակցական, ազատ աշխատանքին, մարդկու-  
թեան ապագան պատկանում է ամեն դասա-  
յարգի լուսաւորված մշակներին:

Այդ զիտակցականն աշխատանքից, այդ լուսաբաժնի մշակների գտախց կը ծնվեն բայօթ վեհացական բարձր գաղափարները՝ ինչպէս ազատութիւն, անհատութիւն, հաւասարութիւն և ազգաքակրթութիւնն... .

Հայեացքը այդ իշխանութեան լատզազ զը-  
լութեան վրա: — «Միջազգային հեռազբական  
ընկերութիւնը հաղարդում է Ա. Պօլսից 6  
(10) յուլիսից, որ Սալֆէտ-փաշա արտաքին  
գործերի մինիստրի տեղ նշանակված է այդ  
պաշտօնի մէջ Աարիֆ-փաշան: Խոկ Սալֆէտ  
փաշտն նշանակված է հասարակաց աշխա-  
տանքների մինիստր: Ասում են որ և պատե-  
րազմական մինիստր փոխվելու է: Գունայի  
թիւքաց զօրքի կառավարիչ Աբգուլ Քերիմ-  
փաշա սուլթանի հրամանով հրաժարեցրած  
է իր պաշտօնից և նրա տեղը նշանակված է  
Օսմանն. փաշա:

0.691.10

Հասպատի հեռագրականն ընկերութիւնը Հազորպում է առաջական լրագիրներին յուլիսի  
8-ից (20-ից) հետեւալը: Անդիլիայի արագա-  
քին գործերի մինիստր, լօրդ Դերբի բարձր  
պարլամենտի մէջ մի ճառ է տակը որի մէջ  
ներկայացրեց մանրամասն կերպով անդիլիա-  
կան տէրութեան քաղաքականութեան եղա-  
նակը արեւելեան խնդրի վերաբերութեամբ:  
Լօրդ Դերբի յիշեց որ անդիլիական տէրու-  
թիւնը իր ժամանակին զգուշացրեց բարձրա-  
գոյն Պուռլ չը սպասել Անդիլիայի կողմից  
ոչինչ օգնութիւն, եթէ նա կը հրաժարվէ  
Կ. Պօլսի կօնֆերէնցիայի առաջարկութիւն-  
ներից, և այժմն ել ոչինչ պատճառ չունի  
շեղփելիք առաջդիմայ բռնած քաղաքականու-  
թեան եղանակից: Խակ ինչ որ վերաբերում  
է միւս պատերազմով կողմին, Ուուսասանին,  
այդ վերջին պետութիւնը ներկայացրեց բա-  
ւականացուցիչ պատասխանն Անդիլիայի կողմից  
արած հարցերին անդիլիական քաղաքականու-  
թեան շահերին չը դիմուելու վերաբերութեամբ:  
Մ. յդգէս Անդիլիան ոչինչ պատճառ չունենա-  
լով խառնվել Ուուսասանի և Թիւքքիայի մէջ  
ծագած պատերազմի մէջ կը պահէ չէզօք  
քաղաքականութեան դիրքը և ուշադրու-

թեսամբ կը հետեւէ կաստացով անքքերին։  
Այդ տեսակ քաղաքականութիւնը միջոց կը  
տայ Անգլիային պահպանել անխափա երկրի  
բոլոր նիւթական սյժերը և թշու կը տայ  
անզիւական տէրութեանը աւելի գործնական  
և աւելի մեծ չեղինակութեամբ իր ժամա-  
նակին մամնակցել խաղաղական պայմաններ  
կապելու ժամանակ լինելու բանակցութիւն-  
ներին

Ա. Ա. ԽԵՂԱՄԱԳԻ «Տագլատ» լրագրին զբուժել են,

որ ստուաց կառավարութենից նշանակված իշխան ԶԵՐԿԱՍՏԻԿՈՒՄ մշակեց արդէն Բօլգարիայի կալուածական բաժանման մի պրօէկտու Մահմետական խոշոր կալուածատէրիքին զիտաւորութիւն կայ զբկել կալուածական իրաւունքից, և յիտուն տարվայ ընթացքում նրանց կը տրվի վարձարութիւն նրանցից յետ առած հողերի համար։ Համայնքի կազմակերպութիւնը Բօլգարիայում կը լինի ոռոսաց համայնքի կաղմանկերպութեան նման։ Հաշարաբր դատաւորները կրնարվեն ժողովրդից։ Ժամանակաւոր կերպով կարգելի Բօլգարիայի մահմետականերին կառավարչական պատշաճները վարելու։ Ազգային զօրքերը կը կազմվեն միմիայն քրիստոնեաներից։ Եկպարի և բօլգարեան սինօդի բոլոր անդամները կը նորվեն աղջիկ և կը հաստատվեն իրանց պաշտների մէջ զեներալ-գուբերնատուութերնատօրի իշխանութեամբ։ Դատաստանական և կառավարչական զբագրութիւնները կը կատարվեն ուստի մշակված է ժամանակաւոր քաղաքական և քրիստոնեան օրէնսդրութիւնը։ Վիէնայի «Presse» լրագիրը ասում է, որ գեռ կազմված չէ Բօլգարիայի կենտրօնական կառավարութիւնը։ Այսովով մէջ մոցրած է քաղաքային ինքնավարութիւնը։ Նայնը կը

մացնվի Հետպշետէ և ուրիշ քաղաքներում  
և գիւղերում Հետպշետէ երբ ամբողջ Բօլ-  
դարիս կը մաքրվե մահմետական իշխանու-  
թենից, կը մոցնվե Բօլգարիայում սեփական  
կառավարութիւնը Հասկանալի է որ Բօլգա-  
րիայի տեղական ժողովուրդը անկարող է  
յանձն առնել կառավարչական պաշտօններ,  
բայց այդ պաշտօնները կը յանձնվեն մասմբ  
ոռութերին, մասսմբ էլ բօլգարական գաղ-  
թականներին Ոռումները կը լինեն նոր առ-  
մինխարացիայի առաջնորդներ, իսկ բօլգա-  
րացիները այդ աղմինխարացիայի կատարա-  
ղական օրգաններ; Նատերը բօլգարացիներից,

յայտնեցին իրանց ցանկութիւնը վերադառնալ կամ իրանց հայրենիքը և ծառայել այնաեղանոցա թիւը կամի այն բօլգարացիների թրուպի, որոք թափառում էին գաղթականների պես զանազան երկիրներում և պէտք է հաշվել և այն բաղմաթիւ երիտասարդներին, որոնք ուսում են առնում օսար երկիրների բարձրագոյն գործոցներում, ինչպէս, օրինակ՝ Փարիզի, Պրագայի, Վիեննայի և Ա. Պետերբուրգի համալսարաններում։ Այդ երիտասարդները պատրաստ են խսկյնյետ գալիքանութիւնիքը և նուիրել իրանց հայրենիքը և նուիրել իրանց անձը իրանց հայրենիքի ծառայութեանը։ Առում են որ այդ ուսում առնող երիտասարդների թիւը բաւական նշանաւոր է։ Ա. Պետերբուրգում բազմնթիւ բօլգարացիներ ուսում են առնում սուսաց տերութեան հաշով, մօտ յիսուն բօլգարացի երիտասարդներ կան Պրագայի համալսարանում, մօտ հարիւր հոգի բօլգարացի ուսանողներ զատախօսութիւններ են, բայց Փարիզի բարձրագոյն գործոցներում

ԳՐԱՆՈՒՅՆ

Ֆրանկիս պատվաստվում է պատգամաւոր-ների ժողովի գալու ընտրութիւններին։ Տէ-լութեանը բարեկամ՝ պատվամաւորների ցու-ցակը, ինչպէս լսել է «Patrie» լրագիրը կազմ-վում է ոչ թէ ներքին գործերի մինիստրու-թեան մեջ այլ մինիստրների խորհրդում։ Եժմեան կառավարութիւնը յօյս ունի յաղ-թող հանդիսանալ ընտրութիւններից և մըտ-ցնել պատվամաւորների ժողովս աէրութեանը բարեկամ ուղղութիւն ունեցող պատվամա-ընդուների մեծ մասը։ Հանրապետական կու-սակցութեան լրագիրները հաւատացած են, ընդհակառակին, որ հանրապետական կուսակ-ցութիւնը յաղթող կը հանդիսանայ։

#### **СИНЕЙ ГЛАВЫЕНОВА**

# Ցիւրիկա 6 յաւլիսի

կառավարութիւններից և հիւրամտիրութեամբ ըստ  
դաշտական գույքացածքներից, ոչ ուսկաւ օգնու-  
ցին սոցա մտաւոր յառաջազիմաթեան, ինչպէ-  
ջուզդիր Վինկել, Աարլ Ֆախտ, Յովաննէս Շէլ-  
և սորտ հանգուցեալ եղբայրը երեկը մանկա-  
վարժ Թոմաս Շէրբը և այլք: Բայց օրինակնե-  
զանելու համար ինձ հարկ չը կայ քբքիւլ ան-  
ցեալը՝ նոյն խոլ այժմեան արեելեան պատ-  
րագիւր բաւական լիսաւեց Ցիւրփիի մետաքս-  
ուէն բանուածքների և Ծրնեկի մամացցներ-  
աւուաւուրին: Խոլ եթէ Աստուած չանէ նորի  
Քրանու-գերմանական պատերազմ ծագի, Աի-  
հէլմ Տէլի խալազանէր հայրենակիցները սուր-  
պուած կը լինեն զինաւորքիւլ ու գնալ սահման-  
ները պաշտպանելու թէ և միւս կողմից գուցէ կո-

զի՞ն գործարանների կօնկարենցիայից, առի  
կունենան խրեանց տաւարին ու պահիրը լս  
կնով սաղացնելու, ինչպէս նաև այս տարրու  
հնձուած ու հնձուելու խռար, որը անցեալ երկի  
աւատ տարբիներից 500 աւելի է:

Քայց առ այժմ՝ ի՞շպէտ ասացի, Ծվեյցարիտ  
պարապած է իւր ներքին գործերով, այն է և  
Գօթհարտի տուննելով (որը մի և նոյն ժամանու  
միջադրացին ձեւնարկութիւն է), խաղողի միջի  
ոչնչացնելու աղքատ հնարքներ որոնելով, վար  
չութեան պաշտօնեաների ու ոճիկները պակասուի  
նելու առաջարկաթեամբ, բայց ամենից աւ  
եաւ պատճենական առ հնարքների հայտն

Ապացուց է, որ սկզբնական ռեսուլվիան իմբը գիրքը ամենամեծ հոգացողութեան առարկայ չէ յարացւց համար, որտեղ չառ լաւ են հակացել այն ճշմարտութիւնը, թէ, որպէս զի համապետական կառավարութեան ձեր խափակի չը դառնայ այս կամ այն կուսակցութեան ձեռին, ինչպէս ջրանսիայում, հարկաւոր է անպատճառ որ հասարակ ժողովուրդը ստանուածնէ այնչափ կրթութիւն, որ կարողանայ ճանաչել իւր սեփական օգուտները, իւր պարագերն ու իրաւունքները, և այս է պատճառ, ոչ վեցարիան ազգային կրթութեան գործի մեջ

Յլուրի լիտուան, ինչպէս նաև շատ կանոններու հասարակաց շենքերի մեջ ամենափառակա տարրական երկուու դպրոցներն են, ուսուցիչք մանկավարժական կրթութիւն ստացած ու համեմատաբար այլ երկրների հետ, բաւական լավագա տրուած, անհաւատալի առաւառութիւն դպասագրերի, պատկերների, զործիքների և աղաքարժական առարկաների, պրեթէ իւրաքանչիւ ուսումնաբան ուղի ժողովածուներ երկրի կենացնիների, բոյսերի և հանքերի, բազորի մօտ զբանաւում է մի առանձին շենք մարմնամարզութեան ձևաբար, վերջին վիճակապական տեղի կութիւններից յայանելեցաւ, որ Շվեյցարիայու միջին հաշոտ 580 հոգու վրա մի տարրակա ուսումնաբան է գալիս, իւրաքանչիւրի մէջ 80-81 աշակերտ, 30-40 աշակերտի համար մի ուսուցիչ։ Ուսուցմունքը պարտապիր է և ժողովուրդը արդէն այնպէս զգացել է նորա կարևոր

Նազգլուաւոր պատճառը ուսուցիչների տպիսութիւնը և բնակչութիւնը է, «Ուսուցիչներից շատերը, ասում է պատռութիւնը պիրեկաօք չունեն մի հաստատ մեթօդ և բնաւորութիւնը չունեն սէր կատարելագործվելու և կարծում թէ ամեն բան լու է, ինչ որ իրանք են անու իւրաքանչյուր օրուայ դաստաւութեան համայատապէս չեն պատրաստում, և այս պատճառով ընկնառմ են մեքենականութեան մէջ. Ու չեն զարձնում ընդհայեցական ուսուցման վրա չեն աշխատում, որ աշակերտը ինքը մտածէ գտնէ, այլ պարապեցնում են միայն նորայութիւնը. Շատերի պակասութիւնը այն որ երեխայի բարոր հոգեկան զօրութիւնները ի մեր մէջ չեն ունենում, զիտեն ալը չեն դարձնում կաթեն ալու, սովորածը չէ դրսութիւնը. Պատճութեան մէջ բաւականութիւնը քաղաքների և թուականների անունները անգամ անել առաջի պատմական անձինքների առաք նութեանց վրա և ոչ մի խօնք չեն ասում, իսօս ոքով առաջերը չեն հաջուկութիւնները հաստատ են այն հիմնական օրէնքը, թէ աշեակարտը պիտի կարողանայ ուրիշի բերանացի գրաւոր ժամաները հասկանալ և իրենները լաւ առայայտել. Մի ուրիշ պատճառ էլ գլուխութիւնը պատճառ է անդամական բնակչութիւնները չափ շատ և խառնիքաւուն տեղեկութիւնները հաղորդում զիտութեան զանազան ձիւզերից, մայրենի լեզուն և թուականութիւնը սաստ վաստակում են.»

Ի հարկէ, Շվէյցարիայի ուսումնարանների վեզմանը նայողին կամ շատ շատ ներսից միավեր ի վերաց քննութիւն յիշեալ պակասութիւնն աչքի չեն վարնում, բայց ով որ ժամերով ներկայ գտնուել է զատախօսութիւններին, մօտ ծովոթացել է ուսուցիչների հետ, նա չե կարուրանալ պատ. վերատեսչի խօսքերի ձշմատութիւնը. Գոնէ ես շատ բաների մէջ իրաւունք տալիս նորան: Այսուղի տարրական ուսուցիչների մէջ, չը նայելով ոսցա մանկավարժեան կան կրթութեանը, ես պատահել եմ այնպիսին բին, որոնք, գերմանական ասացուածքով, թշրւաւ մարդիկ են, բայց վատ երաժշտաներ, ենոյնպէս այնպիսիններին, որոնց անընդունակութեանը ու մտքի սահմանափակութեանը իրաւամբ կարող էին նախանձել մինչեւ անգամ մի քանի հայ մանկավարժները, թող չասեն ինթե դոքա իու բոլորն էլ սեմինարներում են ովորել—ի՞նչ օգուտ, կը պատասխանեմ ես, բժմամիտը միշտ բժմամիտ, կը մնայ, թէ կուզ համարաբաններում ուսուած լինէր 1): Անընդունակութիւնը մանկավարժութեան մէջ այնպիսի զգալի չէ, ինչպէս միւս զիտութիւնների և բուհամաների մէջ, և այս է պատճառ որ անընդունականներից շատերը մի քանի ծանծաղ համբաւական ու այլ տեսաբանական զիտելիքն ըստ թող են վշտում հասարակութեան աչքին այնպէս են ցայց տալիս, թէ մեծ բաներ են կտարում: Մանկավարժութիւնը մի արուեստ

որ ոչ միայն գիտելիքները է պահանջում, այլ շնորհ, ընդունակութիւն, հմտութիւն, ազն սիրո, փափուք զգացմոնքներ, բայց ամեն բնից առաջ—խելք, Այս ճշմարտութիւնը լուծակցացած լինելով, շատերը մոզավում առաջարկեցին համայնքներին փող չը խնայել ընդունակ ուսուցիչների համար և չը թողնել, որ սոքներութական նեղութեան պատճառով ոտիպուայլ գործերով պարապել կամ թողնել իրավագութանը, իմ կարծիքով, դա ամենալաւ միջէ լուծունակ ուսուցիչների թիւը շատացներան. Ա. Մարտիր ինչպէս երևում է ինձ, մեծ նշակութիւն չէ տալիս այն հանդաժնառքին, երեխայք զպրոցից դուրս գալուց յետոյ հարկագրուած են բոլոր ժամանակը ֆիզիկական աշխատանքով պարապել: Որիշ բան եր, եթէ քննվարէկուաները բոլորն էլ անընդունակ ուսուցիչների մատ սովորած մինէին, որ անկարելի է երթագրել: Գլուխուր պատճառոներից մինն էլ հոսարակական սպայմաններն են, որոնք ստիպուան շատերին լոկ ֆիզիկական աշխատանքով հածարել: Գլուղացին, կամ արտեհոսաւորը օրական 13-15 ժամ՝ պարապելուց յետոյ շատ ոտակուանակ է գտնում մտաւոր աշխատանքի համար: Ուէկուաւոները իրանք են խոսսութաներ, ուսումնարարանից դուրս գալուց յետոյ ոչ մի զիշեն կարգացել, իսկ զիելու համար նոցա ձեքերը սաստիկ կոչտանում են, այնպէս որ ն

1) Այստեղի համայնքներից մի քանիոք սվարութիւն ունեն իւրեանց ուսուցիչներին պայունութեան լունակութեան համար առաջարկութիւնները լսելու:

